ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆ ԱԱԻԻ-ՎՀԱՀԱԳՊ-21/20

(Ավտոպահեստամասերի և ավտոաքսեսուարների առքուվաճառքի)

ք. Երևան «03» Դեկտեմբեր 2021թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Բազարչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից և «ՎԱՀԱԳՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ-ն (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Պայմանագրին համապատասխան՝ ապրանք են համարվում այն ավտոպահեստամասերը և ավտոաքսեսուարները, որոնք Գնորդի կողմից ներկայացված նախնական հայտի հիման վրա Վաճառողը կտրամադրի Գնորդին:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Գնորդը պարտավորվում է՝

2.1.1 պահանջվող ավտոպահեստամասերի կամ ավտոաքսեսուարների վերաբերյալ Վաճառողին ներկայացնել նախնական հայտ, որում նշվում են ապրանքի անվանումը, քանակը, որակը և ապրանքը տրամադրելու ժամկետը,

2.1.2. նախնական հայտով նախատեսված տեսականուն համապատասխանող ապրանքն ընդունելու դեպքում դրանց համար վճարել Վաճառողի հետ համաձայնեցված գնով,

2.1.3. ապրանքի համար վճարել Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով,

2.1.4. ապրանքը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել ապրանքի անվանման, քանակի և որակի համապատասխանությունը: Ապրանքն ընդունելու արդյունքում կողմերը կազմում և ստորագրում են ապրանքի ընդունման-հանձնման ակտ, որում նշվում է ապրանքի անվանումը, քանակը, որակը, հայտնաբերված թերությունները:

2.2. Գնորդն իրավունք ունի՝

2.2.1. միակողմանի հրաժարվելու Պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը,

2.2.2. պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված ապրանքի համար վճարելուց, եթե Վաճառողը հանձնել է նախապես որոշվածից պակաս քանակի ապրանք, իսկ եթե ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

2.2.3. եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը,

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները,

գ) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը,

2.2.4. չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը,

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով.

2.2.5. անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը,

բ) ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ապրանքը:

2.3. Վաճառողը պարտավորվում է՝

2.3.1. Գնորդին հանձնել Պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը՝ Պայմանագրով և Գնորդի կողմից ներկայացված նախնական հայտով նախատեսված պայմաններին համապատասխան:

2.4. Վաճառողն իրավունք ունի՝

2.4.1. պահանջել Գնորդից վճարելու ապրանքի համար, իսկ ուշացման դեպքում՝ նաև տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան:

3. Վճարման պայմանները

3.1. Գնորդը ապրանքի դիմաց վճարում է հաշիվ-ապրանքագրի հիման վրա, և նշված գումարը ենթակա է վճարման ապրանքը ստանալուց հետո 10/տասը/ բանկային օրվա ընթացքում: Վաճառողի կողմից Գնորդին տրամադրվող ապրանքերի արժեքը տարվա կտրվածքով չի կարող գերազանցել 710.000 (յոթ հարյուր տասը հազար) ՀՀ դրամը:

3.2. Վաճառողի կողմից ներկայացված էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ/ Գնորդը պարտավոր է հաստատել 5 օրացուցային օրվա ընթացքում:

3.3. Էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվը/ Գնորդի կողմից չհաստատելու դեպքում վերջինս պարտավոր է Պպայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Վաճառողին գրավոր ներկայացնել էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը չհաստատելու պատճառները:

3.4. Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ / Գնորդի կողմից չհաստատելու և/կամ նույն ժամկետում չհաստատման պատճառը Վաճառողին գրավոր կերպով չներկայացնելու դեպքում էլեկտրոնային հաշիվ-ապրանքագիրը /Ապրանքների մատակարարման հարկային հաշիվը/ համարվում է Գնորդի կողմից ընդունված, իսկ Վաճառողի կողմից վաճառված ապրանքի դիմաց գումարը ենթակա է վճարման 10 /տասը/ բանկային օրվա ընթացքում:

3.5. Եթե Գնորդը Պայմանագրով սահմանված ժամկետում չկատարի հանձնված ապրանքի համար վճարելու իր պարտականությունները, ապա Վաճառողն իրավունք ունի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վաճառողի կողմից ապրանքը հանձնելու կետանցի դեպքում նա Գնորդին յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարում է տույժ՝ ապրանքի գնի 0.5 %-ի չափով:

4.2. Կողմերը Պայմանագրով չնախատեսված դեպքերում իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի աղդեցությունը շարունակում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

5.1. Կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մյուս կողմը գրավոր պահանջ է ներկայացնում իր խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ: Մեկ շաբաթվա ընթացքում բավարարում չստանալու դեպքում կողմը կարող է իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայց ներկայացնել դատարան:

5.2. Կողմերի միջև ծագած այլ տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում այդ վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:

5.3. Կողմերի միջև Պայմանագրով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2021 թ.-ը:

6.2. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը մինչև դրա ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ և անցումային դրույթներ

7.1. Պայմանագիրը և դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները, դրա բաղկացուցիչ մասը կազմող այլ փաստաթղթերը կարող են կնքվել ստորագրությունները թղթային օրինակների վրա դնելու միջոցով, ինչպես նաև մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ ստորագրության այլ նմանօրինակի օգտագործմամբ, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ուղարկված պայմանագիրը ստորագրելու և էլեկտրոնային փոստով վերադարձնելու միջոցով:

7.2. Պայմանագրի որևէ դրույթի անվավեր լինելու դեպքում Պայմանագրի մնացած դրույթները շարունակում են գործել, եթե դրանց գործողությունը հնարավոր է առանց անվավեր դրույթի: Այդ դեպքում կողմերը պարտավորվում են բարեխղճորեն բանակցել նշված դրույթը վավերական այլ դրույթով փոփոխելու շուրջ՝ մինչ այդ առաջնորդվելով օրենքի համապատասխան նորմերով:

7.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին: Չտեղեկացման բոլոր բացասական հետևանքները, այդ թվում՝ մյուս կողմի կողմից ուղարկված ծանուցումները չստանալու հետևանքները, կրում է ծանուցման պարտականություն ստանձնած կողմը:

7.4. Պայմանագիրը կազմված է միևնույն իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ:

8. Կողմերի վավերապայմանները

Գնորդ	**Վաճառող**
ՀՀ ԱՆ«Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	«ՎԱՀԱԳՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/4	Հասցե՝ ք. Երևան, Տիգրանյան 1 փակուղի 1
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» Արաբկիր մ/ճ	Բանկ՝ «Արդշինբանկ» Արաբկիր մ/ճ
Հ/Հ՝ 163058101441	Հ/Հ 2471201689160000
ՀՎՀՀ՝ 00011624	ՀՎՀՀ 84739435
Հեռ.՝ (+37410) 23 71 34	Հեռ.՝ (+37491) 46 46 80
ՏՆՕՐԵՆ_____Ա. Բազարչյան	ԱՁ_____Վ. Պետրոսյան